ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկա (9 դասաժամ) , մաթեմատիկա (10 դասաժամ) առարկայի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում/Ձև 1/, մեկ լուսանկար 3 x4 չափի

2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/

3.անձը հաստատող փաստաթուղթ

4.Ինքնակենսագրություն/Ձև 5/

5.<<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդհոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/

6.այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/առկայության դեպքում/

9.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները հետ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ

առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 19-ից նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 7-ին, ժամը 15:00-ին Աղավնաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, 2-րդ փողոց, 2-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 094-50-45-11 հեռախոսահամարով: